ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐ

ՀՐԱՄԱՆ

No 21 -Ա/2 «10» հոկտեմբերի 2023թ.

ՊԵՏԱԿԱՆ ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՈՒՄ ՉՈՒՆԵՑՈՂ ՄԻՋԻՆ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐՈՎ «ՔՈՒՅՐԱԿԱՆ ԳՈՐԾ» ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅԱՄԲ ԿՐԹՈՒԹՅՈՒՆ ՍՏԱՑԱԾ ԱՆՁԱՆՑ ՊԵՏԱԿԱՆ ԱՄՓՈՓԻՉ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ՀԱՐՑԱՇԱՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարի 2015 թվականի մարտի 27-ի N 203-Ն հրամանի 11-րդ կետը.

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ

1. Հաստատել պետական հավատարմագրում չունեցող միջին մասնագիտական կրթական ծրագրով «Քույրական գործ» մասնագիտությամբ կրթություն ստացած անձանց պետական ամփոփիչ ատեստավորման հարցաշարը՝ համաձայն հավելվածի:

2. Ուսումնական հաստատության տնօրենին՝ քննությունից առնվազն մեկ շաբաթ առաջ սույն հրամանի հավելվածով հաստատված հարցաշարի հիման վրա կազմել հարցատոմսեր, որում կարող է ընդգրկվել նաև մեկ կամ երկու գործնական աշխատանքների կատարում:

3. Սույն հրամանն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

ԺԱՆՆԱ ԱՆԴՐԵԱՍՅԱՆ

10/10/2023

X

ԺԱՆՆԱ ԱՆԴՐԵԱՍՅԱՆ

Signed by: ANDREASYAN ZHANNA 6402810169

Հավելված
Հայաստանի Հանրապետության
կրթության, գիտության, մշակույթի
և սպորտի նախարարի
2023 թ. հունվարի -ի
N -Ա/2 հրամանի

ՊԵՏԱԿԱՆ ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՈՒՄ ՉՈՒՆԵՑՈՂ ՄԻՋԻՆ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐՈՎ «ՔՈՒՅՐԱԿԱՆ ԳՈՐԾ» ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅԱՄԲ ԿՐԹՈՒԹՅՈՒՆ ՍՏԱՑԱԾ ԱՆՁԱՆՑ ՊԵՏԱԿԱՆ ԱՄՓՈՓԻՉ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ՀԱՐՑԱՇԱՐ

Ի. ՔՈՒՅՐԱԿԱՆ ԳՈՐԾԸ ՄԱՆԿԱԲՈՒԺՈՒԹՅՈՒՆՈՒՄ

1. Երեխաների բժշկական օգնության կազմակերպման համակարգը: Առողջ երեխաներ:

2. Երեխաների առողջության գնահատումը, ֆիզիկական զարգացումը: Երեխաների տարիքային պահանջների առանձնահատկությունները:

3. Քույրական գործընթացի փուլերի առանձնահատկությունները մանկաբուժությունում:

4. Առողջ երեխաների սնուցումը: Կրծքով սնուցում:

5. Անհաս նորածին, բնութագրումը, նշանները, պատճառները: Անհաս նորածնի խնամքը, տաքացումը, կերակրումը, անհրաժեշտ սննդի քանակի որոշումը: Քույրական գործընթացը:

6. Շնչահեղձուկ, պատճառները, կլինիկան, բուժումը, հիվանդների խնամքը, կանխարգելումը: Քույրական գործընթացը շնչահեղձուկի ժամանակ:

7. Նորածնային հեմոլիտիկ հիվանդություն, պատճառները, կլինիկական ձևերը, բարդությունները, խնամքը, բուժման սկզբունքները, կանխարգելումը: Քույրական գործընթացը նորածնային հեմոլիտիկ հիվանդության ժամանակ:

8. Ծննդաբերական վնասվածքներ, ներգանգային արյունազեղումներ, պատճառները, կլինիկան, բարդությունները, խնամքը, բուժման սկզբունքները, կանխարգելումը: Քույրական գործընթացը ներգանգային արյունազեղումների ժամանակ:

9. Մաշկի ոչ բակտերիալ հիվանդություններ /շփաբորբ, քրտնխաշ/, պատճառները, կլինիկան, բարդությունները, խնամքը, բուժման սկզբունքները, կանխարգելումը: Քույրական գործընթացը շփաբորբի ժամանակ:

10. Մաշկի բակտերիալ հիվանդություններ /պիոդերմիաներ/, վեզիկուլոպուստուլյոզ, բշտիկացան, պատճառները, կլինիկան, բարդությունները, խնամքը, բուժումը, կանխարգելումը: Քույրական գործընթացը պիոդերմիաների ժամանակ:

11. Պորտի ինֆեկցիոն հիվանդություններ /օմֆալիտներ/, կատառալ, թարախային, պատճառները, կլինիկան, բարդությունները, խնամքը, բուժման սկզբունքները, կանխարգելումը: Քույրական գործընթացը օմֆալիտների ժամանակ:

12. Նորածնային սեպսիս, պատճառները, կլինիկան, խնամքը, բուժման սկզբունքները, կանխարգելումը: Քույրական գործընթացը նորածնային սեպսիսի ժամանակ:

13. Դիարեա, պատճառները, կլինիկան, ջրազրկման աստիճանի որոշումը, խնամքը, բուժումը, կանխարգելումը: Քույրական գործընթացը դիարեայի ժամանակ:

14. Հիպոտրոֆիա, պատճառները, կլինիկան, աստիճանները, խնամքը, բուժումը, կանխարգելումը: Քույրական գործընթացը հիպոտրոֆիայի ժամանակ:

15.Պայքար տոքսիկոզի և էքսիկոզի դեմ մարսողության սուր խանգարումների ժամանակ:

16. Անհետաձգելի օգնությունը թունավորումների ժամանակ:

17. Ռախիտ, պատճառները, դասակարգումը, կլինիկան, բուժումը, կանխարգելումը /սպեցիֆիկ և ոչ սպեցիֆիկ/: Քույրական գործընթացը ռախիտի ժամանակ:

18. Սպազմոֆիլիա, պատճառները, կլինիկան, խնամքը, բուժումը, կանխարգելումը: Քույրական գործընթացը սպազմոֆիլիայի ժամանակ:

19. Անհետաձգելի օգնությունը լարինգոսպազմի ժամանակ:

20. Էքսուդատիվ-կատարալ դիաթեզ. պատճառները, կլինիկան, խնամքը, բուժումը, կանխարգելումը: Քույրական գործընթացը Էքսուդատիվ-կատառալ դիաթեզի ժամանակ:

21. Սուր ռինիտ, տրախեոբրոնխիտ: Էթիոլոգիան, կլինիկան, բարդությունները, խնամքը, բուժումը, կանխարգելումը: Քույրական գործընթացը սուր ռինիտի, տրախեոբրոնխիտի ժամանակ:

22. Օտիտ. պատճառները, կլինիկական ձևերը, բարդությունները, խնամքը, բուժումը, կանխարգելումը: Քույրական գործընթացը օտիտի ժամանակ:

23. Սուր ստենոզող լարինգոտրախեիտ. պատճառները, կլինիկան, խնամքը, բուժումը, կանխարգելումը: Քույրական գործընթացը կեղծ կրուպի ժամանակ:

24. Անհետաձգելի օգնությունը կեղծ կրուպի նոպայի ժամանակ:

25. Թոքաբորբ. պատճառները, դասակարգումը, կլինիկան, խնամքը, բուժումը, կանխարգելումը: Քույրական գործընթացը թոքաբորբի ժամանակ:

26. Բրոնխիալ ասթմա.պատճառները, կլինիկան, խնամքը, բուժման սկզբունքները, կանխարգելումը: Անհետաձգելի օգնությունը բրոնխիալ ասթմայի նոպայի ժամանակ: Քույրական գործընթացը բրոնխիալ ասթմայի ժամանակ:

27. Անգինա. պատճառները, կլինիկան, խնամքը, բուժումը, կանխարգելումը: Քույրական գործընթացը անգինայի ժամանակ:

28. Սուր շնչական վիրուսային ինֆեկցիաներ՝ գրիպ, պարագրիպ, ադենովիրուսային վարակ: պատճառները, կլինիկան, բարդությունները, խնամքը, բուժումը, կանխարգելումը: Քույրական գործընթացը սուր ռեսպիրատոր վիրուսային ինֆեկցիաների ժամանակ:

29. Սրտի բնածին արատներ. պատճառները, կլինիկան, ախտորոշումը խնամքը, բուժման ժամանակակից մեթոդները: Քույրական գործընթացը սրտի բնածին արատների ժամանակ:

30. Ռևմատիզմ. պատճառները, կլինիկական ձևերը, դասակարգումը, բարդությունները, ախտորոշումը, խնամքը, բուժումը, կանխարգելումը /առաջնային և երկրորդային/: Քույրական գործընթացը ռևմատիզմի ժամանակ:

31. Ռևմատիզմի արտասրտային ախտահարումներ: Ռևմատիկ պոլիարթրիտ. կլինիկան, հիվանդների խնամքը, բուժման սկզբունքները:

32. Փոքր խորեա. կլինիկան, ընթացքը, բուժման հիմնական սկզբունքները: Քույրական գործընթացը փոքր խորեայի ժամանակ:

33. Անհետաձգելի օգնությունը ցնցումների ժամանակ:

34. Անհետաձգելի օգնությունը հիպերթերմիայի ժամանակ:

35. Բերանաբորբեր. պատճառները, կլինիկական ձևերը, խնամքը, բուժումը, կանխարգելումը: Քույրական գործընթացը բերանաբորբերի ժամանակ:

36. Գաստրիտ, գաստրոէնտերիտ. պատճառները, կլինիկան, խնամքը, բուժումը, կանխարգելումը: Քույրական գործընթացը գաստրիտի ժամանակ:

37. Ասկարիդոզ. պատճառները, վարակման եղանակները, կլինիկան, ախտորոշումը, խնամքը, բուժումը, կանխարգելումը: Քույրական գործընթացը ասկարիդոզի ժամանակ:

38. Էնտերոբիոզ. պատճառները, վարակի եղանակները, կլինիկան, ախտորոշումը, խնամքը, բուժումը, կանխարգելումը: Քույրական գործընթացը էնտերոբիոզի ժամանակ:

39.Սուր դիֆուզ գլոմերուլոնեֆրիտ. պատճառները, կլինիկական ձևերը, ընթացքը, ախտորոշումը, բարդությունները, խնամքը, բուժումը, կանխարգելումը: Քույրական գործընթացը սուր դիֆուզ գլոմերուլոնեֆրիտի ժամանակ:

40. Պիելոնեֆրիտ. պատճառները, կլինիկան, ախտորոշումը, բարդությունները, խնամքը, բուժումը, կանխարգելումը: Քույրական գործընթացը պիելոնեֆրիտի ժամանակ:

41. Շաքարային դիաբետ. պատճառները, կլինիկան, ախտորոշումը, բարդությունները, խնամքը, դիետան, բուժումը, կանխարգելումը: Քույրական գործընթացը շաքարային դիաբետի ժամանակ:

42. Հիպերգլիկեմիկ և հիպոգլիկեմիկ կոմաների առաջացման պատճառները, դիֆերենցիալ ախտորոշումը, անհետաձգելի օգնությունը: Քույրական գործընթացը կոմաների ժամանակ:

43. Սակավարյունություն. պատճառները, կլինիկական դասակարգումը, ախտորոշումը, արյան պատկերը, խնամքը, բուժումը, կանխարգելումը: Քույրական գործընթացը սակավարյունության ժամանակ:

44. Լեյկոզ. պատճառները, կլինիկան, ընթացքը, արյան պատկերը, ախտորոշումը, ելքը, խնամքը, բուժման ժամանակակից մեթոդները: Քույրական գործընթացը լեյկոզի ժամանակ:

45. Հեմոռագիկ դիաթեզներ՝ թրոմբոցիտոպենիկ ծիրանացան, հեմոֆիլիա, հեմոռագիկ վասկուլիտ. պատճառները, դասակարգումը, հիմնական կլինիկական նշանները, խնամքը, բուժումը, կանխարգելումը: Քույրական գործընթացը հեմոռագիկ դիաթեզների ժամանակ:

46. Անհետաձգելի օգնությունը արյունահոսությունների ժամանակ:

47. Տուբերկուլյոզը երեխաների մոտ. պատճառները, էպիդեմիոլոգիան: Առաջնային տուբերկուլյոզի բնութագրումը, հիմնական կլնիկական ձևերը, տուբերկուլյոզային ինտոքսիկացիա, առաջնային կոմպլեքս: Քույրական գործընթացը տուբերկուլյոզի ժամանակ:

48. Տուբերկուլյոզային բրոնխադենիտ, մենինգիտ: Տուբերկուլյոզի ախտորոշումը, կլինիկան, խնամքը, բուժումը, կանխարգելումը /սպեցիֆիկ և ոչ սպեցիֆիկ/:

49. Կանխարգելիչ պատվաստումներ, կատարման ժամկետները, հակացուցումները, հետպատվաստումային բարդությունները: Սառցային շղթա:

50. Կարմրուկ. պատճառները, էպիդեմիոլոգիան, կլինիկան, բարդությունները, խնամքը, բուժումը, կանխարգելումը: Քույրական գործընթացը կարմրուկի ժամանակ:

51. Կարմրախտ. պատճառները, էպիդեմիոլոգիան, կլինիկան, բարդությունները, խնամքը, բուժումը, կանխարգելումը: Կարմրուկի և կարմրախտի տարբերակիչ ախտորոշումը: Քույրական գործընթացը կարմրախտի ժամանակ:

52. Քութեշ. պատճառները, էպիդեմիոլոգիան, կլինիկան, բարդությունները, խնամքը, բուժումը, կանխարգելումը: Քույրական գործընթացը քութեշի ժամանակ:

53. Դիֆթերիա. պատճառները, էպիդեմիոլոգիան, կլինիկական ձևերը, ախտանիշները, ախտորոշումը, բարդությունները, խնամքը, բուժումը, կանխարգելումը: Քույրական գործընթացը դիֆթերիայի ժամանակ:

54. Կապույտ հազ. պատճառները, էպիդեմիոլոգիան, կլինիկան, ախտորոշումը, բարդությունները, խնամքը, բուժումը, կանխարգելումը: Քույրական գործընթացը կապույտ հազի ժամանակ:

55. Ջրծաղիկ. պատճառները, էպիդեմիոլոգիան, կլինիկան, ախտորոշումը, բարդությունները, խնամքը, բուժումը, կանխարգելումը: Քույրական գործընթացը ջրծաղիկի ժամանակ:

56. Մենինգակոկային վարակ. պատճառները, էպիդեմիոլոգիան, կլինիկան, ախտորոշումը, բարդությունները, խնամքը, բուժումը, կանխարգելումը: Քույրական գործընթացը մենինգակոկային վարակի ժամանակ:

57. Էպիդեմիկ պարոտիտ. պատճառները, էպիդեմիոլոգիան, կլինիկան, բարդությունները, խնամքը, բուժումը, կանխարգելումը: Քույրական գործընթացը էպիդեմիկ պարոտիտի ժամանակ:

58. Սուր աղիքային ինֆեկցիաներ՝ դիզենտերիա, սալմոնելյոզ, կոլիէնտերիտ, ստաֆիլակոկային բնույթի աղիքային ինֆեկցիաներ. պատճառները, էպիդեմիոլոգիան, կլինիկան, բարդությունները, խնամքը, բուժումը, կանխարգելումը, տարբերակիչ ախտորոշումը: Քույրական գործընթացը սուր աղիքային ինֆեկցիաների ժամանակ:

59. Դիզենտերիա. պատճառները, էպիդեմիոլոգիան, կլինիկան, ախտորոշումը, բարդությունները, խնամքը, բուժումը, կանխարգելումը: Քույրական գործընթացը դիզենտերիայի ժամանակ:

60. Սալմոնելյոզ. պատճառները, էպիդեմիոլոգիան, կլինիկան, ախտորոշումը, բարդությունները, խնամքը, բուժումը, կանխարգելումը: Քույրական գործընթացը սալմոնելյոզի ժամանակ:

61.Կոլիիէնտերիտ. պատճառները, էպիդեմիոլոգիան, կլինիկան, ախտորոշումը, բարդությունները, խնամքը, բուժումը, կանխարգելումը: Քույրական գործընթացը կոլիէնտերիտի ժամանակ:

62. Ստաֆիլակոկային էթիոլոգիայի աղիքային հիվանդություններ. պատճառները, էպիդեմիոլոգիան, կլինիկան, ախտորոշումը, բարդությունները, խնամքը, դիետան, բուժումը, կանխարգելումը: Քույրական գործընթացը դրանց ժամանակ:

63. Վիրուսային համաճարակային հեպատիտ. պատճառները, էպիդեմիոլոգիան, կլինիկական ձևերը, ախտորոշումը, բարդությունները, ընթաղքը, ելքը, խնամքը, բուժումը, կանխարգելումը: Քույրական գործընթացը վիրուսային հեպատիտի ժամանակ:

64. Պոլիոմիելիտ. պատճառները, էպիդեմիոլոգիան, կլինիկան, ախտորոշումը, բարդությունները, խնամքը, բուժումը, կանխարգելումը: Քույրական գործընթացը պոլիոմիելիտի ժամանակ:

II. ՔՈՒՅՐԱԿԱՆ ԳՈՐԾԸ ԹԵՐԱՊԻԱՅՈՒՄ

1. Հասկացություն հիվանդության, հիվանդի, էթիոլոգիայի, կլինիկայի, ախտորոշման, բուժման մասին:

2. Օբյեկտիվ, սուբյեկտիվ, լաբորատոր և գործիքային հետազոտության մեթոդներ:

3. Շնչական համակարգի հիվանդությունների հիմնական ախտանիշները: Հետազոտման մեթոդները: Բուժքրոջ դերը դրանց նախապատրաստման գործում: Քույրական գործընթացի կազմակերպումը շնչական համակարգի հիվանդությունների ժամանակ:

4. Սուր և քրոնիկական բրոնխիտ. բնորոշումը, առաջացման պատճառները, հիմնական կլինիկական ախտանիշները, բուժման սկզբունքները և խնամքը: Քույրական գործընթացը բրոնխիտի ժամանակ:

5. Բրոնխիալ ասթմա. բնորոշումը, առաջացման պատճառները, կլինիկական ախտանիշները, նոպայի նկարագիրը: Նոպայի ժամանակ մինչբժշկական անհետաձգելի օգնության ալգորիթմը: Հիվանդի խնամքը և հսկողությունը: Բրոնխիալ ասթմայի կանխարգելումը և բուժման սկզբունքները: Քույրական գործընթացը բրոնխիալ ասթմայի ժամանակ:

6. Սուր թոքաբորբ. բնորոշումը, առաջացման պատճառները: Օջախային և կրուպոզ թոքաբորբ: Հիմնական կլինիկական ախտանիշները, ախտորոշումը, ընթացքը, բարդությունները: Բուժման սկզբունքները և խնամքը: Կանխարգելումը: Քույրական գործընթացը թոքաբորբերի ժամանակ:

7. Պլևրիտներ. բնորոշումը, առաջացման պատճառները: Չոր և էքսուդատիվ պլևրիտներ: Ախտանիշները, բուժման սկզբունքները և խնամքը: Պլևրալ պունկցիան, հիվանդների հսկողությունը դրա ժամանակ: Քույրական գործընթացը պլևրիտների ժամանակ:

8. Հասկացողություն թոքերի թարախային հիվանդությունների մասին: Թոքի թարախակույտ: Բրոնխոէկտատիկ հիվանդություն: Բնորոշումը, առաջացման պատճառները, կլինիկական ախտանիշները: Բուժման սկզբունքները: Քույրական գործընթացը թոքերի թարախային հիվանդությունների ժամանակ:

9. Թոքի քաղցկեղ: Հիմնական կլինիկական ախտանիշները: Բուժման սկզբունքները, խնամքը, կանխարգելումը: Քույրական գործընթացը թոքի քաղցկեղի ժամանակ:

10. Թոքի տուբերկուլոզ. բնորոշումը, առաջացման պատճառը, հիմնական կլինիկական ախտանիշները, բարդությունները: Անհետաձգելի օգնության ալգորիթմը թոքային արյունահոսության ժամանակ: Բուժման սկզբունքները, խնամքը, կանխարգելումը: Քույրական գործընթացը թոքի տուբերկուլոզի ժամանակ:

11. Սիրտ-անոթային համակարգի հիվանդություններ, հիմնական կլինիկական ախտանիշները, հետազոտման մեթոդները: Բուժքրոջ դերը դրանց նախապատրաստման գործում: Քույրական գործընթացը սիրտ-անոթային համակարգի հիվանդությունների ժամանակ:

12. Ռևմատիզմ. բնորոշումը: Հիվանդության առաջացման հիմքում օջախային վարակի նշանակությունը: Ռևմատիզմի դասակարգումը: Հիմնական կլինիկական ախտանիշները, հետազոտության մեթոդները: Հիվանդության ելքը, բուժման սկզբունքները: Հիվանդների խնամքը, կանխարգելումը, դիսպանսերիզացիան: Քույրական գործընթացը ռևմատիզմի ժամանակ:

13. Սրտի արատներ. բնորոշումը, դասակարգումը: Հասկացողություն բնածին և ձեռքբերովի արատների մասին: Միթրալ փականի անբավարարություն, միթրալ ստենոզ: Հեմոդինամիկայի խանգարումները արատների դեպքում: Հիմնական կլնիկական ախտանիշները: Բուժման սկզբունքները և խնամքը: Քույրական գործընթացը սրտի արատների ժամանակ:

14. Հասկացողություն միոկարդիտների, էնդոկարդիտների, պերիկարդիտների մասին: Հիմնական կլինիկական ախտանիշները: Հետազոտման մեթոդները: Բուժման սկզբունքները, խնամքը, դիսպանսեր հսկողությունը: Քույրական գործընթացը դրանց ժամանակ:

15. Զարկերակային հիպերթենզիա. բնորոշումը, դասակարգումը, առաջացման պատճառները, հիմնական կլինիկական ախտանիշները: Հիվանդության բարդությունները: Հիպերտոնիկ կրիզ: Անհետաձգելի օգնության ալգորիթմը հիպերտոնիկ կրիզի ժամանակ: Բուժման սկզբունքները, խնամքը, դիսպանսեր հսկողությունը: Քույրական գործընթացը զարկերակային հիպերթենզիայի ժամանակ:

16. Աթերոսկլերոզ. բնորոշումը, առաջացման պատճառները: Տարբեր ձևերի ժամանակ հիմնական կլինիկական ախտանիշները: Բուժման սկզբունքները, կանխարգելումը: Քույրական գործընթացը աթերոսկլերոզի ժամանակ:

17. Սրտի իշեմիկ հիվանդություն. առաջացման պատճառները, նպաստող գործոնները, դասակարգումը: Ստենոկարդիա. բնորոշումը, առաջացման պատճառները, կլինիկական ախտանիշները: Անհետաձգելի օգնության ալգորիթմը նոպայի ժամանակ: Միջնոպայական շրջանի բուժումը: Քույրական գործընթացը ստենոկարդիայի ժամանակ:

18. Սրտամկանի ինֆարկտ. բնորոշումը, առաջացման պատճառները, դասակարգումը, կլինիկականախտանիշները: Սուր շրջանի բարդությունները: Հիվանդների հսկողության և խնամքի առանձնահատկությունները: Անհետաձգելի օգնության ալգորիթմը ինֆարկտի ժամանակ: Բուժման սկզբունքները, կանխարգելումը: Հիվանդների ռեաբիլիտացիան: Քույրական գործընթացը սրտամկանի ինֆարկտի ժամանակ:

19. Սուր անոթային անբավարարություն. ուշագնացություն, կոլապս, շոկ: Առաջացման պատճառները, հիմնական կլինիկական ախտանիշները: Անհետաձգելի օգնության

ալգորիթմը ուշագնացության, կոլապսի, շոկի ժամանակ: Բուժման և խնամքի առանձնահատկությունները: Քույրական գործընթացը սուր անոթային անբավարարության ժամանակ:

20. Սուր սրտային անբավարարություն (Ձախ փոփոքային սուր անբավարարություն): բնորոշումը, առաջացման պատճառները, նպաստող գործոնները: Սրտային ասթմա, թոքի այտուց: Կլինիկական ախտանիշները: Անհետաձգելի օգնության ալգորիթմը սրտային ասթմայի նոպայի ժամանակ: Բուժքրոջ դերը անհետաձգելի օգնության հարցում: Հիվանդների խնամքի առանձնահատկությունները: Քույրական գործընթացը սրտային ասթմայի և թոքի այտուցի ժամանակ:

21. Սրտային քրոնիկական անբավարարություն. Առաջացման պատճառները, դասակարգումը: Կլինիկական ախտանիշները ըստ շրջանների: Բուժման սկզբունքները ըստ շրջանների: Խնամքի առանձնահատկությունները: Քույրական գործընթացը քրոնիկական սրտային անբավարարության ժամանակ:

22. Մարսողական համակարգի հիվանդությունների հիմնական ախտանիշները, հետազոտման մեթոդները, բուժքրոջ դերը նրանց նախապատրաստման գործում: Քույրական գործընթացի կազմակերպումը մարսողական համակարգի հիվանդությունների ժամանակ:

23. Սուր և քրոնիկական գաստրիտ. բնորոշումը, առաջացման պատճառները, հիմնական կլինիկական ախտանիշները: Բուժման սկզբունքները: Խնամքի առանձնահատկությունները: Հիվանդների դիսպանսերացում: Քույրական գործընթացը գաստրիտների ժամանակ:

24. Ստամոքսի և 12 մատնյա աղու խոցային հիվանդություն. բնորոշումը, առաջացման պատճառները, հիմնական կլինիկական ախտանիշները, բարդությունները: Անհետաձգելի օգնության ալգորիթմը բարդությունների ժամանակ: Բուժման սկզբունքները: Խնամքի և հսկողության առանձնահատկությունները: Քույրական գործընթացը խոցային հիվանդության ժամանակ:

25. Ստամոքսի քաղցկեղ. առաջացման պատճառները, հիմնական կլինիկական ախտանիշները: Բուժման սկզբունքները: Դեոնթոլոգիական մոտեցումը խնամքի ժամանակ, կանխարգելումը: Քույրական գործընթացը ստամոքսի քաղցկեղի ժամանակ:

26. Էնտերիտ, կոլիտ, բնորոշումը, առաջացման պատճառները, հիմնական կլինիկական ախտանիշները, բուժման սկզբունքները, խնամքի առանձնահատկությունները: Քույրական գործընթացը էնտերիտի և կոլիտի ժամանակ:

27. Հեպատիտ. բնորոշումը, առաջացման պատճառները, հիմնական կլինիկական

ախտանիշները: Բուժման և խնամքի սկզբունքները: Քույրական գործընթացը հեպատիտի ժամանակ:

28. Լյարդի ցիրոզ. բնորոշումը, առաջացման պատճառները, նախատրամադրող գործոնները, հիմնական կլինիկական ախտանիշները: Բուժման սկզբունքները և խնամքը: Դեոնտոլոգիական մոտեցումը, կանխարգելումը: Քույրական գործընթացը լյարդի ցիրոզի ժամանակ:

29. Խոլեցիստիտ. բնորոշումը, առաջացման պատճառները: Սուր և քրոնիկական խոլեցիստիտի հիմնական կլինիկական ախտանիշները, ախտորոշումը: Բուժման սկզբունքները և խնամքը, կանխարգելումը: Քույրական գործընթացը խոլեցիստիտի ժամանակ:

30. Լեղաքարային հիվանդություն. բնորոշումը, առաջացման պատճառները, կլինիկական ախտանիշները, ախտորոշումը: Անհետաձգելի օգնության ալգորիթմը լեղային խիթի ժամանակ: Քույրական գործընթացը լեղաքարային հիվանդության ժամանակ:

31. Միզային համակարգի հիվանդությունների հիմնական ախտանիշները, հետազոտման մեթոդները, բուժքրոջ դերը նրանց նախապատրաստման գործում: Քույրական գործընթացի կազմակերպումը միզային համակարգի հիվանդությունների ժամանակ:

32. Սուր և քրոնիկական գլոմերուլոնեֆրիտ. բնորոշումը, առաջացման պատճառները, ախտածագումը, կլինիկական ախտանիշները, ախտորոշումը: Բուժման սկզբունքները, բուժական սնուցման առանձնահատկությունները: Ելքը, կանխարգելումը: Քույրական գործընթացը գլոմերուլոնեֆրիտի ժամանակ:

33. Սուր և քրոնիկական պիելոնեֆրիտ. բնորոշումը, առաջացման պատճառները, ախտածագումը, կլինիկական ձևերը, ախտանիշները, ընթացքը: Բուժման սկզբունքները, խնամքը և կանխարգելումը: Հիվանդների դիսպանսերիզացիան: Քույրական գործընթացը պիելոնեֆրիտի ժամանակ:

34. Միզաքարային հիվանդություն. առաջացման պատճառները, հիվանդության ընթացքը: Երիկամային խիթ: Անհետաձգելի օգնության ալգորիթմը երիկամային խիթի ժամանակ: Միջնոպայական շրջանի բուժումը: Բարդությունները և կանխարգելումը: Քույրական գործընթացը միզաքարային հիվանդության ժամանակ:

35. Հասկացողություն երիկամային քրոնիկական անբավարարության մասին: Կլինիկական արտահայտման ձևերը: Ուրեմիկ կոմա, անհետաձգելի օգնությունը դրա ժամանակ: Բուժման սկզբունքները և խնամքը: Քույրական գործընթացը երիկամային քրոնիկական անբավարարության ժամանակ:

36. Արյան և արյունաստեղծ համակարգի հիվանդությունների հիմնական կլինիկական

ախտանիշները: Հետազոտման մեթոդները և բուժքրոջ դերը դրանց նախապատրաստման գործում: Քույրական գործընթացի կազմակերպումը արյան և արյունաստեղծ համակարգի հիվանդությունների ժամանակ:

37. Անեմիաներ. բնորոշումը, դասակարգումը: Հետարյունահոսական, երկաթպակասուրդային, վիտամին B12 պակասուրդային անեմիաներ: Դրանց բնորոշումները, կլինիկական ախտանիշները, հետազոտման մեթոդները, արյան պատկերը, բուժման սկզբունքները, խնամքը: Քույրական գործընթացը անեմիաների ժամանակ:

38. Լեյկոզներ. առաջացման պատճառները: Սուր և քրոնիկաան միելոլեյկոզ, լիմֆոլեյկոզ: Կլինիկական ախտանիշները: Արյան պատկերը: Բուժման սկզբունքները, խնամքը, բարդությունները և կանխարգելումը: Քույրական գործընթացը լեյկոզների ժամանակ:

39. Էնդոկրին համակարգի հիվանդությունների հիմնական ախտանիշները, հետազոտման մեթոդները, բուժքրոջ դերը դրանց նախապատրաստման գործում: Քույրական գործընթացի կազմակերպումը էնդոկրին համակարգի հիվանդությունների ժամանակ:

40. Տարածուն տոքսիկ խպիպ. բնորոշումը, առաջացման պատճառները, կլինիկական ախտանիշները: Բուժման սկզբունքները և խնամքը: Դիսպանսերիզացիան, կանխարգելումը: Քույրական գործընթացը տարածուն տոքսիկ խպիպի ժամանակ:

41. Հիպոթիրեոզ (Միքսեդեմա). առաջացման պատճառները, ախտածագումը, հիմնական կլինիկական ախտանիշները: Բուժման սկզբունքները և խնամքը: Քույրական գործընթացը հիպոթիրեոզի ժամանակ:

42. Էնդեմիկ խպիպ. բնորոշումը, առաջացման պատճառները, կլինիկական ախտանիշները: Բուժման սկզբունքները և խնամքը, կանխարգելումը: Քույրական գործընթացը էնդեմիկ խպիպի ժամանակ:

43. Շաքարային դիաբետ. բնորոշումը, առաջացման պատճառները, ախտածագումը, դասակարգումը, կլինիկական ախտանիշները, ախտորոշումը: Բուժման սկզբունքները և խնամքը: Կլինիկական ձևերը և բարդությունները: Անհետաձգելի օգնության ալգորիթմը դիաբետիկ և հիպոգլիկեմիկ կոմաների ժամանակ: Դիսպանսերիզացիան, կանխարգելումը: Քույրական գործընթացը շաքարային դիաբետի ժամանակ:

44. Ռեմատոիդ պոլիարթրիտ. բնորոշումը: Քրոնիկական վարակային օջախների նշանակությունը դրանց առաջացման գործում: Հիմնական կլինիկական ախտանիշները, հետազոտման մեթոդները, ընթացքը: Բուժման սկզբունքները և, խնամքը, կանխարգելումը: Քույրական գործընթացը ռևմատոիդ պոլիարթրիտի ժամանակ:

45. Ալերգոզներ. եղնջացան, Քվինկեի այտուց, անաֆիլաքսային շոկ: Բնորոշումը, առաջացման պատճառները: Անհետաձգելի օգնության ալգորիթմը դրանց ժամանակ:

Բուժման սկզբունքները և խնամքը: Քույրական գործընթացը ալերգոզների ժամանակ:

46. Պարբերական հիվանդություն. առաջացման պատճառները, կլինիկական ձևերը, հիմնական ախտանիշները, հետազոտման մեթոդները: Բուժման սկզբունքները և խնամքը: Քույրական գործընթացը պարբերական հիվանդության ժամանակ:

III. ՔՈՒՅՐԱԿԱՆ ԳՈՐԾԸ ՎԻՐԱԲՈՒԺՈՒԹՅՈՒՆՈՒՄ

1. Հասկացություն վիրաբուժության և վիրաբուժական հիվանդությունների մասին:
2. Ներհիվանդանոցային վիրաբուժական վարակը և նրա կանխարգելումը:
3. Հականեխում. բնորոշումը, տեսակները:
4. Ապանեխում. բնորոշումը, եղանակները:
5. Վիրաբուժական գործիքները, խմբերը, նախամանրէազերծումը և մանրէազերծման եղանակները:
6. Արյունահոսություն. բնորոշումը, դասակարգումը, կլինիկական ախտանիշները, ժամանակավոր և վերջնական դադարեցման եղանակները: Քույրական գործընթացը արյունահոսության ժամանակ:
7. Արյան փոխներարկում. եղանակները, ցուցումներն ու հակացուցումները, ոխներարկվող արյան պիտանելիության որոշումը, բարդությունները:
8. Արյան խմբային և ռեզուս պատկանելիության որոշումը:
9. Ցավազրկում. տեսակները՝ ընդհանուր, տեղային, ողնուղեղային: Քույրական գործընթացը ընդհանուր, տեղային և ողնուղեղային ցավազրկման ժամանակ:
10. Դեսմուրգիա. էությունը, կապերի տեսակները, մարմնի տարբեր մասերի վիրակապությունները:
11. Տրանսպորտային անշարժացում. ձևերը, շինաները տեղադրելու կանոնները:
12. Վնասվածքներ. բնորոշումը, դասակարգումը, հետազոտման եղանակները և առաջին բուժ.օգնությունը: Քույրական գործընթացը վնասվածքների ժամանակ:
13. Փափուկ հյուսվածքների սալջարդ, կապանների, մկանների ձգվածություն և պատռվածք, առաջացման պատճառները, կլինիկական ախտանիշները, առաջին բուժ.օգնությունը, բուժման և խնամքի սկզբունքները: Քույրական գործընթացը փափուկ հյուսվածքների սալջարդի, կապանների, մկանների ձգվածության և պատռվածքների ժամանակ:
14. Հոդախախտ. դասակարգումը, առաջացման պատճառները, կլինիկական ախտանիշները, առաջին բուժ. օգնությունը, բուժման և խնամքի սկզբունքները: Քույրական

գործընթացը հոդախախտի ժամանակ:

15. Կոտրվածքներ. դասակարգումը, հիմնական ախտանիշները, առաջին բուժ. օգնությունը, բուժման սկզբունքները և խնամքի առանձնահատկությունները: Քույրական գործընթացը կոտրվածքների ժամանակ:

16. Վերքեր. բնորոշումը, դասակարգումը, վերքերի լավացման փուլերը, եղանակները, առաջին բուժ.օգնությունը, բուժման և խնամքի սկզբունքները: Քույրական գործընթացը վերքերի ժամանակ:

17. Այրվածքներ. այրվածքային հիվանդություն, բնորոշումը, դասակարգումը, այրվածքի խորության աստիճանները, այրված մակերեսի որոշման եղանակները, առաջին բուժ.օգնությունը, բուժման և խնամքի սկզբունքները: Քույրական գործընթացը այրվածքների ժամանակ:

18. Էլեկտրահարություն. Ընդհանուր և տեղային ախտանիշները, առաջին բուժ.օգնությունը, բուժման և խնամքի սկզբունքները: Սիրտ-թոքային վերակենդանացման ալգորիթմը՝ C. A. B. փուլերով: Քույրական գործընթացը էլեկտրահարության ժամանակ:

19. Ցրտահարություն. նպաստող գործոնները, աստիճանները, առաջին բուժ.օգնությունը, բուժման և խնամքի սկզբունքները: Քույրական գործընթացը ցրտահարության ժամանակ:

20. Գանգուղեղի փակ վնասվածքներ. դասակարգումը, հիմնական կլինիկական ախտանիշները, առաջին բուժ. օգնությունը, բուժման և խնամքի սկզբունքները: Քույրական գործընթացը գանգուղեղի փակ վնասվածքների ժամանակ:

21. Կրծքավանդակի վնասվածքներ. դասակարգումը, կողերի փակ կոտրվածք, կրծքավանդակի թափանցող վնասվածքներ, պնևմոթորաքս, կլինիկական ախտանիշները, առաջին բուժ.օգնությունը, բուժման և խնամքի սկզբունքները: Քույրական գործընթացը կրծքավանդակի վնասվածքների ժամանակ:

22. Ողնաշարի և կոնքի վնասվածքներ. դասակարգումը, կլինիկական ախտանիշները, բարդությունները, բուժման և խնամքի սկզբունքները: Քույրական գործընթացը ողնաշարի և կոնքի վնասվածքների ժամանակ:

23. Վիրաբուժական վարակ. բնորոշումը, դասակարգումը, տեղային և ընդհանուր կլինիկական ախտանիշները, բուժման և խնամքի սկզբունքները:

24. Ֆուրունկուլ, ֆուրունկուլյոզ, կարբունկուլ. բնորոշումները, կլինիկական ախտանիշները, բուժման և խնամքի սկզբունքները:

25. Աբսցես (թարախակույտ) և ֆլեգմոնա. բնորոշումները, կլինիկական ախտանիշները, բուժման և խնամքի սկզբունքները:

26. Կարմիր քամի, հիդրադենիտ, լիմֆադենիտ, լիմֆանգիտ. բնորոշումները, կլինիկական

ախտանիշները, բուժման և խնամքի սկզբունքները:

27. Ֆլեբիտ, տրոմբոֆլեբիտ. բնորոշումը, կլինիկական ախտանիշները, բուժման և խնամքի սկզբունքները:

28. Օստեոմիելիտ. բնորոշումը, դասակարգումը, կլինիկական ախտանիշները, բուժման և խնամքի սկզբունքները:

29. Սեպսիս. բնորոշումը, դասակարգումը, կլինիկական ախտանիշները, բուժման և խնամքի սկզբունքները:

30. Անաէրոբ վարակ. բնորոշումը, փայտացում, կլինիկական ախտանիշները, կանխարգելումը, բուժման և խնամքի սկզբունքները:

31. Անաէրոբ վարակ. բնորոշումը, գազային գանգրենա, կլինիկական ախտանիշները, կանխարգելումը, բուժման և խնամքի սկզբունքները:

32. Մատնաշունչ. բնորոշումը, դասակարգումը, կլինիկական ախտանիշները, բուժման և խնամքի սկզբունքները:

33. Մաստիտ. բնորոշումը, զարգացման փուլերը, կլինիկական ախտանիշները, կանխարգելումը, բուժման և խնամքի սկզբունքները:

34. Մեռուկացում, խոցեր և խուղակներ. բնորոշումը, առաջացման պատճառները, դասակարգումը, կլինիկական ախտանիշները, բուժման և խնամքի սկզբունքները: Քույրական գործընթացը մեռուկացման տարբեր ախտանիշներ ունեցող հիվանդների մոտ:

35. Երակների վարիկոզ լայնացում, խցանող էնդարտերիտ և աթերոսկլերոզ, առաջացման պատճառները, հիմնական կլինիկական ախտանիշները, բուժման և խնամքի սկզբունքները: Քույրական գործընթացը անոթային հիվանդությունների ժամանակ:

36. Նորագոյացություններ. բնորոշումը, դասակարգումը/բարորակ, չարորակ և ըստ հյուսվածքների/, ուռուցքների զարգացման ժամանակակից տեսությունը, կանխարգելումը, ախտորոշման եղանակները, բուժման և խնամքի սկզբունքները:

37. Չարորակ նորագոյացություններ. բնորոշումը, կլինիկական ախտանիշները, զարգացման փուլերը, ախտորոշման եղանակները, բուժման և խնամքի սկզբունքները:

38. Որովայնի առաջնային պատի և ներքին օրգանների վնասվածքներ. առաջացման պատճառները, կլինիկական ախտանիշները, առաջին բուժ.օգնությունը, բուժման և խնամքի սկզբունքները:

39. «Սուր որովայնե համախտանիշ. բնորոշումը, առաջացման պատճառները, կլինիկական ախտանիշները, առաջին բուժ.օգնությունը, բուժման և խնամքի սկզբունքները: Քույրական գործընթացը «Սուր որովայնե համախտանիշ առաջացնող հիվանդությունների ժամանակ:

40. Որովայնամզի բորբոքում (պերիտոնիտ). առաջացման պատճառները, դասակարգումը,

հիմնական կլինիկական ախտանիշները, առաջին բուժ.օգնությունը, բուժման և խնամքի սկզբունքները:

41. Ճողվածքներ. բնորոշումը, դասակարգումը, կլինիկական ախտանիշները, բարդությունները, առաջին բուժ.օգնությունը, բուժման և խնամքի սկզբունքները:

42. Կույր աղու որդանման ելունի բորբոքում (ապենդիցիտ). բնորոշումը, դասակարգումը, կլինիկական ախտանիշները, առաջին բուժ.օգնությունը, բուժման և խնամքի սկզբունքները: Քույրական գործընթացը ստամոքսի և տասներկումատնյա աղու խոցային հիվանդությունների ժամանակ:

43. Ենթաստամոքսային գեղձի բորբոքում՝ պանկրեատիտ, պատճառները: Հիմնական կլինիկական նշանները, կանխարգելումը, բուժումը: Քույրական գործընթացը պանկրեատիտի ժամանակ:

44. Ստամոքսի և տասներկումատնյա աղու խոցային հիվանդություն. բնորոշումը, պատճառները, կլինիկական ախտանիշները, բարդությունները /ստամոքսի թափածակում, թափանցում, ստամոքսային արյունահոսություն, ստամոքսաելքի նեղացում, չարորակացում/, հիմնական կլինիկական ախտանիշները, առաջին բուժ.օգնությունը, բուժման և խնամքի սկզբունքները:

45. Խոլեցիստիտ, լեղաքարային հիվանդություն. Առաջացման պատճառները, հիմնական կլինիկական ախտանիշները, առաջին բուժ.օգնությունը լյարդային խիթի դեպքում, բուժման և խնամքի սկզբունքները: Քույրական գործընթացը խոլեցիստիտի և լեղաքարային հիվանդության ժամանակ:

46. Աղիների անանցանելիություն. բնորոշումը, դասակարգումը, կլինիկական ախտանիշները, բուժման և խնամքի սկզբունքները: Քույրական գործընթացը աղիների անանցանելիության ժամանակ:

47. Ուղիղ աղու վիրաբուժական հիվանդություններ. հետազոտման եղանակները, թութք, պարապրոկտիտ, սրբանի ճաք, առաջացման պատճառները, կլինիկական ախտանիշները, բուժման և խնամքի սկզբունքները: Քույրական գործընթացը ուղիղ աղու վիրաբուժական հիվանդությունների նախավիրահատական և հետվիրահատական շրջանում:

48. Միզասեռական օրգանների վիրաբուժական հիվանդություններ. հետազոտման եղանակները, երիկամաքարային հիվանդություն, ցիստիտ, շագանակագեղձի բորբոքում /ադենոմա/, առաջացման պատճառները, կլինիկական ախտանիշները, առաջին բուժ.օգնությունը, բուժման և խնամքի սկզբունքները: Միզապարկի կաթետերիզացիայի ալգորիթմը: Քույրական գործընթացը միզասեռական օրգանների հետվիրահատական շրջանում:

49. Վահանաձև գեղձի հիվանդություններ՝ խպիպ և թիրեոտոքսիկոզ, առաջացման պատճառները, հիմնական կլինիկական նշանները, կանխարգելումը, բուժման սկզբունքները: Քույրական գործընթացը նախավիրահատական և հետվիրահատական շրջանում: